

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Աղվան Վարդանյանի, Վահան Հովհաննիսյանի և Արմեն Բաբայանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-077-06.09.2012-ՄԻ) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է եվրաինտեգրման պետական քաղաքականություն, որը պետք է ապահովի նաև ֆինանսական ոլորտի կարգավորմանն ուղղված Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանությունը եվրադիրեկտիվների պահանջներին:

Այդ նպատակով՝ դեռևս 2008 թվականին ընդունված «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերարտադրվել են եվրադիրեկտիվի

(N 87/102/EEC)՝ սպառողական կրեդիտների գովազդը կարգավորող դրույթները: Նշված եվրադիրեկտիվը պահանջներ է սահմանում միայն սպառողական նպատակով տրամադրվող վարկերի գովազդների համար, ուստի, նպատակահարմար չէ շեղվել դրանից և սահմանել առավել խիստ պահանջներ՝ գովազդի նկատմամբ պահանջները տարածելով բոլոր վարկատեսակների վրա:

Ելնելով շարադրվածից՝ Ձեզ ենք ներկայացնում օրենքի նախագծի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համար ընդունելի տարբերակը (կցվում է):

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ
«ԳՈՎԱԶԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-183 օրենքի 16-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եթե սպառողական կրեդիտի վերաբերյալ գովազդը (հայտարարություն, առաջարկ, օֆերտա կամ օֆերտա անելու հրավեր և այլն)՝ անկախ տեղադրման վայրից, պարունակում է տոկոսների չափի կամ կրեդիտի տրամադրման վերաբերյալ որևէ այլ վճարի կամ ծախսի վերաբերյալ նշում, ապա այդպիսի գովազդը պետք է նաև պարունակի օրենքով նախատեսված կարգով հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը, ընդ որում, այն դեպքում, երբ հնարավոր չէ գովազդ սպառողների համար ողջամիտ ձևով հաստի դարձնել տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը, ներկայացվում է դրա հաշվարկման օրինակը:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն օրենքի 16-րդ հոդվածի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության «Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու
մասին» ՀՀ օրենքի նախագծի**

«Հայաստանի Հանրապետության «Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու
մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն
չի ունենա:

**<<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
(այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի
օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և
կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական
հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների
վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը
կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում
կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության
համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու
անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *վարկի տրամադրման գովազդներում վարկի արժեքի վրա ազդող բոլոր պայմանների ներկայացմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման վերաբերյալ

Ներկայացված նախագծով նախատեսվում է վարկերի տրամադրման մասին գովազդները համապատասխանեցնել «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին, այն է՝ գովազդը պետք է լինի հավաստի եւ բարեխիղճ:

Հաշվի առնելով, որ նախագծի նպատակն է կարգավորել վարկի տրամադրման մասին գովազդներում վարկի փաստացի արժեքի ներառման հարցերը, «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը բյուջետային բնագավառում կունենա չեզոք ազդեցություն:

Եզրակացություն

«Գովազդի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Գովազդի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԳՈՎԱԶԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետև՝ օրենք) 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Եթե վարկի տրամադրման, օգտվելու կամ մարման վերաբերյալ գովազդային ծառայությունները (հայտարարություն, առաջարկ, օֆերտա կամ օֆերտա անելու հրավեր եւ այլն)՝ անկախ գովազդի տեղադրման վայրից, պարունակում են վարկի արժեքի վրա ազդող թեկուզ մեկ պայման՝ տոկոսների չափի կամ վարկի տրամադրման ու մարման հետ կապված որեւէ այլ վճարի կամ ծախսի մասին, ապա այդպիսի գովազդը պետք է պարունակի բոլոր մնացած պայմանները, որոնք որոշում են վարկի փաստացի արժեքը (վարկի ընդհանուր գումարը, տոկոսը, այն ստանալու եւ մարելու համար կատարվող ծախսերը), ընդ որում, այն դեպքում, երբ հնարավոր չէ ողջամիտ ձեռով հասու դարձնել վարկի փաստացի արժեքը՝ ներկայացվում է դրա հաշվարկման կարգը կամ վարկի տարեկան փաստացի արժեքի առավելագույն չափը:»

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն օրենքի 16-րդ հոդվածի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Կենտրոնական բանկն է:»

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

Ներկայումս վարկերի տրամադման մասին գովազդներում ներկայացվում են հայտարարություններ, առաջարկներ եւ պայմաններ, որոնք ոչ միշտ են արտացոլում վարկի տրամադրման, օգտվելու եւ մարման փաստացի արժեքը (վարկի ընդհանուր գումարը, տոկոսը եւ այն ստանալու համար կատարվող բոլոր ծախսերը), ինչը վարկառուին գրկում է իր նախնական հաշվարկները կատարելու, իրեն հարմար բանկ կամ վարկային կազմակերպություն ընտրելու հնարավորությունից:

Մյուս կողմից հայտարարվում է մի տոկոսադրյուք, որն իր բնույթով լինելով վարկի արժեքը, հաճախ իր մեջ չի ներառում վարկի ստացման, սպասարկման եւ մարման համար կատարվող ծախսումները, արդյունքում վարկառուի համար վարկի արժեքը մեծանում է, որը հաճախ հանգեցնում է անցանկալի հետեւանքների, ներառյալ անվճարունակությունը եւ անհարկի ծախսումների պահանջի ձեւավորմանը:

Այս իրավիճակը նմանվում է ոչ հավաստի տեղեկատվությամբ ապրանքների եւ ծառայությունների ձեռք բերմանը, իսկ հաճախ նաեւ՝ անբարեխիղճ գովազդի դրսեւորմանը: Մինչդեռ գովազդի մասին օրենքը պահանջում է, որպեսզի գովազդը լինի հավաստի եւ բարեխիղճ: Ինչպես ամրագրված է հիշյալ օրենքի 7-րդ հոդվածում գովազդի հավաստիությունը վերաբերում է նաեւ ապրանքների եւ ծառայությունների վճարման լրացուցիչ պայմաններին, իսկ 21-րդ հոդվածի համաձայն, արգելվում է հրապարակել անբարեխիղճ գովազդ: Ընդ որում, գովազդն անբարեխիղճ է, եթե օրինակ ապակողմնորոշում է իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, քանի որ լիարժեքորեն չի ներկայացվել ապրանքի կամ ծառայության (տվյալ դեպքում փողի եւ այն վճարելիության սկզբունքով տրամադրվող վարկային ծառայության) առանձնահատկությունները, գինը եւ այլ անհրաժեշտ տեղեկատվությունը: Նույն հոդվածի համաձայն մասնակիորեն անբարեխիղճ գովազդն անբարեխիղճ է համարվում ամբողջությամբ:

Հետեւաբար օրինագծի 1-ին հոդվածը միտված է լրացնելու այս բացը:

Օրինագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է ֆինանսական եւ վարկային ծառայությունների ոլորտում գովազդի մասին օրենքի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ՀՀ կենտրոնական բանկին, ինչպես մասնագիտական, այնպես էլ կազմակերպչական նկատառումներից ելնելով:

Օրինագիծը մշակել են ՀՅԴ խմբակցության պատգամավորները եւ փորձագետները: